

Այս վեպը առանց ընթերցելու չեմք
կարող հոս երկարաբանել, ալ պարտին
ընթերցատէր անձինք դիմել Յ. Դա-
ֆաֆեանի գրանոց և 12 դասկական վե-
ճարելով գնել մէն մի օրինակ որուն
Բ. հատորն ալ քիչ օրէն խոստացուի
հրատարակել :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱՏՈՒԹԻՒՆՔ

Շատերուն ըսինք թէ արժէք չունեցող բանի մը կարեւորութիւն տալը անտեղութիւն է։ Սակայն մեզի ինչեր եղան ըսին, թէ ինչ մանր կայծեր ինչ մեծամեծ հրդեհներու պատճառ եղած են։ Քրքրմի արեւելեան պատերազմին պատճառը ինչ էր. Բըրուսիա—Գաղղիական պատերազմին պատճառը ինչ էր, մանաւանդ այս վերջինինը որուն վրայ աշխարհ համարէն մեծ սորոսաբի մէջ մնաց. և թէ վերջը ինչ խոշոր հակայածն կերպարանք մը առաւ. աշխարհ մը ազդ մը գրեթէ քանդեցաւ, անդին անկանջը խօսի Պիդմարք իշխանն ալ գահէն ինքզինքը չի կրցաւ բռնելէր, ուստի զարմանալի չէ կրսն երբ փուռն չի և Մասիսի մէջ տեղի ունեցած բաւարարութիւնը (ասիկայ ալ նորեկը մենամարտութիւն մըն է.) կամ ըստ նոր բանաստեղծի գործածակնամարտութիւնը ունեւորվ, վերջը, ո՛վ գիտէ ինչ ձիւներ բերէ ազգին գլխուն, գուցէ խեղճ ազգը երկուքի, գուցէ երեքի բաժնէ։

Սրհնեալ է Աստուած, որ այս օրերուն ալ հասանք, եպիսկոպոս, գըրագէտ, բանաստեղծ են. ևն. մարդ չի մնաց այս օրերս սկսան հանճարնին թափել, և լրագրներու անվերջանալի նիւթեր յարուցանել, կնայիմ որ շատեր ալ ստակ կուտան, մինչդեռ ուրիշ ատեն այսքան հող չէին տաներ ու քթերնին կախած փուռնի և Մասիսի բաւարարութեան յօդուածները կարդալու կճգնին, իմ միտքս բնաւ այս կռիւն մէջ մտնալ չէ, և ոչ ալ բաւարարութեան ասպարէզին մէջ ոտք երկնցնել, քաւ լիցի, վասն զի այն աստիճան բաւարարութեան և բաւարարութեան բարձր համոզմունքը չունենիմ, միայն թէ ընթերցողներուն ձանձ. ըրոյթ չի տալու գրութեամբ քանի մը խօսք ունիմ գրուցելիք. յուսամ որ բաւարարութեան ձանձարացուցիչ տողերու չափ գոնէ աչք մը երկնցընեն։

Ատենք Նարոյի նշանաւոր դպրոցի մը մէջ թուաբանութեան հարցաքննութեան ժամանակ երկու «գէլգէլ» սովորելի, փոքրիկ տղեկ մը մէկդի առած, երկու անգամ երկուքը ինչ կընէ ըսելով տղուն վրայ կը յարձակին. սա ալ դարձեալ աշակիս հարցման մը՝ երկուքին վրայ ալ աչքը դարձընելով, երկու անգամ երկուքը 400 կընէ կըսէ, սովորելները կսկսին բարձրէն ծիծաղել—ինչ կընեաք, կըսէ, թէ որ երկուքնիդ մէյմէկ զրօ եղած ըլլաք քովը, 400 չընէ՞ր մի կըսէ։ Սովորելներն ալ հոն չենկենտ, երկուքըն ալ մէկ մէկ դի կըբաշուին։

Մեր բաւարարութեան խնդիրն ալ ասկէ վար չի մնար, Բայց մենք որ ո՛չ կարեւորութիւն տուած էինք ոչ այս խնդրոյն և ոչ ալ երկու հակառակորդաց հարցափոխման, ինչ պէտք տեսան, ինչ իմացան, ինչ աղքատ կարեւորութիւն նկատեցին ժամանակիս կենդանի գրագէտները (չըլլայ որ մէկը վրաս յարձակի, հազար բաւարարն ալ ես կրանամ, կենդանի ըսելով հիմակական ողջ գտնելով դրագէտները ըսել կուղեմ և ոչ թէ նախնաց մատենագիրները) որ այսպիսի ամենաչնչին խնդիր մը համար գրչին շօր. ժելու ելան։

Ինչ կարեւորութիւն գտնեցիք պա-

րոն գրագէտներ այդքան լեզու թաւելու երկու չնչին բառերու վրայ. գիտէ՞ք արեւօք թէ քանի քանի բաւարարութեան և բաւարարութեան պէտքեր ունի մեր ազգը՝ որ գուցէ օր մը, եթէ Աստուած կամենայ, գըրագէտներու խումբով մը պիտի կարենայ կատարելագործել։ Ո՛ր են մեր արեւտական ու մեքենական բառերը, առեւտրական ու բժշկական բառերը, բուսաբանական և ուսումնական խել մը կարեւոր բառերը, ասոնց վրայօք օր մը մէկուն մտքէն բան մը չանցնիր, ու հիմայ երեւելու հատ անպիտան բառեր լուծելու կաշխատին, ո՛ր են, պէտքը չէ՞ մի՞ որ ասոնց հինգը վեցը (թէ որ ալ կաննէ) մէկտեղ ժողովքած Ուսումնական խորհրդոյն աշակցութեամբ ջանան գրագիտութեան խմբաւոր մը հաստատելու և օր օրի հայերէն լեզուն ճոխացնելով, լեզուն պակասեցը լեզուն, այնպէս որ մէկ կողմէն ալ պատույ անդամներ աւելնալով յիշեալ կաճառին գէպ յառաջ չայ լեզուն դպրութեան մէկ համարանք կազմուի. որուն մէջ միանգամայն, Ուսումնական խորհուրդը կեդրոնանայ ազգին դպրոցական վիճակը բարեկարգելու։ Բայց որքան տակաւին հեռու ենք ասոնցմէ։

Իւր երիտասարդութիւնը երկար ատեն փառելի մէջ փառեցող գրագէտնիս ալ՝ աւելոր հասակին մէջ Մովսիսական գաւազանով Պօլիս վազելու ատեն ինչ հրաշքեր կատարէինք իրմէն. ինչ անկալութիւններ ունէինք իւր վրայ. միթէ սոքա՞ էին նոցա արդիւնքը, որ եթէ այս անպէտ խնդիրն ալ չի ծագէր նորա անունը և երեսը անգամ չի պիտի կրնայինք տեսնալ։

1870 թուոյն պատերազմէն յառաջ փառիզ գաւազան ատեն, գիշեր մը երկու երեք ժամէն աւելի յիշեալ Մեծ. գրագէտին յիշեալը նստած՝ որ տան մը եօթներորդ յարկը կը բնակէր, երկարօրէն խօսակցութիւններ ըրինք իւր հետը։ Բաւեցայ արդարեւ իւր անցուցած վիճակին, և ըսի իրեն թէ՝ բոլոր Պօլսոյ չայ ժողովուրդը ձեր վերադարձին անձկանօք ակնկալու է, ու այնպիսի ազդու կերպով զինքը համոզեցի որ ժամանակ չանցընելով Պօլիս դառնայ չայ ազգին մէջ իւր հանճարոյն նշուլը տարածելու։ Հաւանեցաւ ու սիրով հաճութիւն տրուաւ, և ահա այն միջոցին էր համարձակեցայ իրեն հարցնել թէ՞ արդեօք այսքան բազմամեայ առանձնութեամբ անցուցած գրագիտական կեանքին մէջ ինչ երկասիրութիւն մը ինչ նուէր մը պատրաստած է ազգիս. ասոր գոհացուցիչ պատասխան մը չը կրնաւ առնելու մեծ ցաւ զգացի, միայն այսքան մը կրցի իմանալ թէ 20 տարեկ է վեր Տէպա օրագրին բանասիրականները մկրատով կտրած ու մէկ մէկու վրայ կարգաւ շարած՝ մինչև այն օրը խնամով պահած ունի եղեր իւր քովը։

Ոչ այնքան սիրով բաժնեկցեցայ ինչեալ գրագէտին քովէն, և ահա ինչ որ զգացի նոյն կէտին՝ նոյն ցաւօք սրտի կը տեսնեմ այսօր, ինծի ելեր 5-600 անգրէ բաղկացեալ յօդուած մը կ'զբ. ընէ անպիտան խնդրոյ մը վրայ, մարդ Աստուծոյ, ինչ խնդիրներ ունինք գրելիք, ինչ ցաւեր ունինք ողբելիք, քանի՞ քանի՞ հրահանգներ ունինք տալիք չայ մանկուոյ դաստիարակութեան, և նոցա ծնողացը, ինչ խորհուրդներ ունինք հաղորդելիք Ազգ. վարչութիւնը ստանձնող մարմիններուն, քանի քանի

պէտքեր ունինք աւանդ ժողովուրդը իւր խորագացած քունէն արթնցնելու և նորա նիւթական և բարոյական վիճակը բարեկարգելու։

Իրաւ յիշեալ գրագէտը նոյն յօդուածը գրելով խաղաղիկի (մայթապի) ելեր է և լեռնէ լեռ ցաթկելով պահ մընայ ձորերուն մէջ ինքզինքը նետելով պահ մը զառ ի վայրէ վայր գահաւիժելով, վերջպէս դարձեալ երկու ոտքի վրայ կրցեր է կայնիլ, բայց մենք ասանկ բան մը չէինք սպասել իրմէն, և ժամանակնիս չի ներեր «մայթապի» ելլալ։

Այս ըսելով միտքերնիս յիշեալ երեւելի գրագէտին պատուոյն և իւր հանճարոյն բնաւ արատ մը բերել չէ. քաւ լիցի. վասն զի մենք իւր տաղանդը ամենէն յառաջ ճանցողներէն ենք, միայն թէ այսքան մը կուգնք յիշեցնել թէ՞ այսօրուան ապրած դարերնիս՝ խիստ տարբեր է հոյն նկատմամբ։ Հին ժամանակաւ դպրոցներուն մէջ՝ Նարեկը ջուրի պէս անսխալ կարգացողին առաջին միջոցնալը կուտային։

Այսօր թուաբանութիւն դաս առնող 12-13 տարեկան աղեկի մը «Ալ. ճէպրայի» հաւասարութեան քանիբրորդ աստիճանի խնդիրը կրնայ լուծել. ահա այս կը հարցըլի, որով ամեն բան ժամանակին համեմատ կըլայնուի. այսօր յիշեալ գրագէտին այսպիսի յօդուածէն ոչ ոք կրնայ գոհ ըլլալ։ Ինչդե փունջն ալ աս ինչ միտքի էր տիրացայ ըսելով՝ չուտած յօդուածը կարդալու ալ մտքէ չանցած, իր բուն ծաղկովը գրաշարին կը խրկէ, ու վերջը ընթերցողաց հետ ինքն ալ կը կարդայ, ուրիշ ինչ կրնամ ըսել. Անդին պարոն Ասիան ալ պիտի խելացի բրդեր ու մէկ տարեկան Ասիա ձրի տալու նուէր կը խոստանայ, թէ որ յիշեալ գրագէտին բարձրահանճար գրութեանցը իրեն բացատրութիւն տալու ելլայ մէկը։ Տեսա՞ր մի վարպետ մարդը, ինչ իտրագէտ ճամբայ մը բռնել է, թղթէ Ասիա մը նուէր կը խօստանայ, հասկըցար մի խօսքը, թող երազահան մը կամ Պրնձէ քաղաք մը խոստանար, ասքանի հոգիներ կը վազէին իրեն բաւարարութիւն տալու։ Թող ներեն ընթերցողք եթէ երբեմն զուարճախօսութեան ալ կըլլանք, վասն զի այնքան ցաւեր ունինք սրտերնիս, որոնք փառատելու համար երբեմն երբեմն լեզու նիս այսպէս փոխելու պարտաւան կըլլանք։

Դէպք մըն ալ պատմելով առ այժմ վերջ տանք խօսքերուն։

Ատենք քահանային մէկը շաբաթ օր մը քաղաքէն կելլայ վեց եօթը ժամու ճամբայ հեռու գիւղ մը երթալու ուր վեց ամիս անգամ մը կերթայ եղեր Ս. Պատարագ մատուցանելու։ Այնքան ճամբան ոտքով քալելով բընականաբար յոգնած դարձած գիւղին երեւելիին տունը հագու թէ մուծին կը հասնի գիւղերը հոն անցընելու, և քիչ մը բան ուտելէն ետքը պառկելու կերթայ պապարելով տան տիկինին որ առաւառան խիստ կանուխ ձայն տայ իրեն, վասն զի իւր քունը չատ ծանր է կըսէր։ Տիկինը սիրով կը խոստանայ, քահանան ալ անկողինը կը մտնայ։ Սակայն իւր չափազանց խոնջութեամբը սարսափելի ծանր քունի մէջ խորացած մնալով, մէկ մ'ալ կարթննայ որ արեւը շատոնց ծագեր, ժամանակը անցեր և բոլոր գիւղացիներն ալ ցրուել գացեր են։ Ինչդե քահանան անկողնէն ցաթկելով տիկինին

վրայ կը վազէ, բարձր ձայնով պատճառը կը հարցունէ իրեն ձայն չի տա. լուռ. տիկինն ալ նոր ելած կսկսի արտմիլ այս եղելութեանը, և կըսէ թէ՝ Տէր Հայր, շատ կը ցաւիմոր այս առաւօտ մեր էջը չի գուց որ քեզի ձայն տայի. — Ինչ կըսես կնիկ կըսէ այլալիւրով քահանան, իսկ նա դարձեալ կը պատասխանէ թէ — ամեն առաւօտ կանուխ դեռ լոյսը չի ճղք. վաճ էջերնիս անընդհատ կը գուար, ես ալ նոյն միջոցին կարթննայի. ինչ ընեմ, ներհակ պիտի ըլլայ ես, այս առաւօտ ալ չի գուց որ արթննայի, յանցանքը իմն չէ Տէր Հայր և կըսէ։

Քահանան ասի լսելով, մօրուքը ձեռքը առած գլուխը խել մը շարժելով, վա՛յ այն խեղճ գիւղացիներուն կըսէ որ վեց ամիսը անգամ մը՝ այն ալ տիկինին իշուն գուռուն շնորհիւ Ս. անմահ պատարագ տեսնելու բարեբաղդութիւնը պիտի ունենան։

Հոս կընդմիջենք խօսքերնիս խոստանալով ուրիշ անգամ տեսնուի մեր ընթերցողաց հետ։

(Ե. Վ. Թ. Ե.)

Ալաֆրանկա մոյիս 13տէ Երիտէ հարեքէթի արդ վուգու պուրադ, արդ չօգ ասամ թէլէֆ օլմուշ տուր։

— Ինկիլթէրո հիւրիւմէթի, պուկիւնէ գատար, Գուրխիթ էջգընալ իշին ինկիլթէրաւա սիւրալ վէ միւ. հիւմաթը հարպիւնէ սաթըն ալընմաւընա միւստատէ իթմիշ օլտուղու հայտի պու քերէթ թէպտիլի մէսլըք իտէրէք իշլիմիթ սուլտընտա գալիսթ էջգընալ իշին սիւրալա երեքիւ իքի գըթա սէֆիւնէյի տըլը գօյտուրթմուշ տուր։

— Ինտէրանտանս Բէմօտ դադէթա ոքտա օգուստուղունա կէօրէ, Սերմէշտէ գատընըն պիրի, իւշ ալըք յօճուղունու պէշիւնէ եաթըրըպ, խանէտէն տիշալը չըգըրգաւան սօնորա, պիրթագըմֆարէլէր պէշիլին իւզըրիւնէ չըգըպ, յօճուղուն երկուշիւ կէօզըրիւնէ վէ էլէրիւն կէմիրէ կէմիրէ գան իւշ միւլէմմա իտէրէր վէ վալիտէսի էլէ կէլիպ, յօճուղուն պու հալիլի կէօրիւն. ճէ տէլի տիվանէ օլարադ անիտէ թապիպ ճէլիլի իւշ յօճուղուն թէտալիսին պագտըրը իսէ տէ, քեար իթմէյիպ յօճուգ օ կիճէ վէֆաթ իտէր։

— Շահ հաղրէթլէրի, Թէհէրանը թէրը իթմէշտէն, եալընըգ գատընլաւա մախսուս օլարադ կիւնէշ նըշանը իսմիլէ պիր նըշան իհասա իթմիշ իտի Միւշաբիլէյ հաղրէթլէրի պու կիւնէտէք, մէշքիւր նըշանտան, Ալմանես իմէրաթ իթիշաւը, վէ ինկիլթէրա գըրալիշաւը, վէ Ալմանեսըն վէլիի ահալ մոտամաւը, վէ բըրէնսէս տը կալ վէ Բուսիա վէլիի ահալ բըրէնսիւնի մատամաւընա պիրէր գըթա իթա իլլէմիշ վէ պուստանտա մատաւ, ինկիլթէրա գըրալիշաւը իւշ բըրէն. սէս տը կալ, միւլէվէթաթլա միւլգէյնէն ֆօթօլրաֆընը հէտիլէ վիւմիշ տիր։

— Լոտտոտա իրան շահը հաղրէթլէրիւն իգրամէն իճրա իտիլէն րէսիւկէլիտի, շահ հաղրէթլէրի օլ տէրէնէ թահսին իլլէմիշ տիր քի պէլիտէքի գըլընը չըգալըպ, ինկիլթէրա օլտուսու գօմաշտանը տըլըք տը Գամպըրիլէ հէտիլէ իթմիշ տիր։

ՍԱՀԻԳ ՂԱՋԻԹԱ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ

Գալաթաւ Բէնճէ մպիւ բազարըն
Պ. 41 Իրսի խանընա